ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 6-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի գիտական աշխատողների ընդհանուր ժողովը, որը քննարկեց «Սովետական գիտության, գրականության և արվեստի բոլոր գործիչներին, Սովետական Միության գիտական, հասարակական և մյուս կազմակերպություններին ու հիմնարկություններին» ուղղված դիմումը։

Ժողովը բաց արեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրիզիդենտ Վ. Համբարձումյանը։ Դիմումի տեքստի հրապարակումից հետո ճառով հանդես եկավ Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Վ. Գուլքանյանը։

— Մենք հավանություն ենք տալիս,— ասաց նա,— և ջերմորեն պաշտպանում սովետական գիտության, գրականության, արվեստի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների առաջարկությանը՝ քաղաքական և գիտական գիտելիքների տարածման համամիութենական ընկերություն ստեղծելու մասին։

Մեր Ակադեմիան գիտական պրոպագանդայի խորհրդի միջոցով վերջին տարիներս գիտական հանրամատչելի դասախոսություններ և զրույցներ է անցկացրել ռեսպուբլիկայի քաղաքների և գյուղերի բնակչության մեջ։ Բայց դա բավական չէ։ Բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակը բարձրացնելու և սովետական գյուղացիության կուլտուրան վճռականորեն բարձրացնելու համար մեզնից պահանջվում է է՛լ ավելի մեծ ջանքեր գործադրել քաղաքական և գիտական գիտելիքներ տարածելու ուղղությամբ։

Վ. Գուլքանյանը հույս հայտնեց, որ Հայաստանի գիտնականներն է՛լ ավելի ակտիվորեն կաշխատեն աշխատավորների սոցիալիստական գիտակցությունը բարձրացնելու համար։

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ասատրյանը խոսեց Գրականության ինստիտուտի գիտական աշխատողների խնդիրների մասին՝ աշխատավորների կուլտուրական աճման և գաղափարական-քաղաքական դաստիարակության գործում։

Ընդհանուր ժողովը որոշում կայացրեց բոլոր միջոցներով նպաստել քաղաքական և գիտական գիտելիքների տարածման համամիութենական ընկերության ստեղծմանը և ակտիվորեն մասնակցել նրա գործունեությանը։

(ՀՀԳ)